ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«19» «05» 2022 թ. № 157-Ա

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ՍԻՍԻԱՆԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԵՎ «ՃԱՄԲԱՐԱԿԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՆՏԱՌԱՇԻՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, հիմք ընդունելով վարչապետի՝ 2018 թվականի հունիսի 11-ի № 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը, շրջակա միջավայրի վրա ազդեցության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի № ԲՓ-0199-21 և 2022 թվականի ապրիլի 15-ի № ԲՓ-0038-22 շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննական եզրակացությունները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառաշինական նախագիծը (անտառակառավարման պլանը)՝ համաձայն № 1 հավելվածի:
2. Հաստատել շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառաշինական նախագիծը (անտառակառավարման պլանը)՝ համաձայն № 2 հավելվածի:
3. Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի նախագահին՝ հնգօրյա ժամկետում ապահովել անտառաշինական նախագծերի (անտառակառավարման պլանների) հանձնումը «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:
4. Սույն հրամանի 1-ին և 2-րդ կետերով հաստատված անտառակառավարման պլաններով նախատեսված միջոցառումների կատարման հսկողությունը վերապահել շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի նախագահին:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

5/19/2022

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«____» _____2022թ.

ք.Երևան